«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մարդ - բնություն փոխհարաբերությունը Սահյանի պոեզիայում՝ որպես ռազմավարություն, սովորողների ճանաչողական հմտությունները, կարողություններն ու ստեղծագործական մտածողությունը զարգացնելու գործում

Առարկա՝ Գրականություն

Հեղինակ՝ Աննա Մնացականյան

Մարզ՝ Արագածոտն

Ուսումնական հաստատություն՝ Արագածի թիվ 2 մ/դ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն.....3
- Գլուխ 1. Սահյանը որպես բնության երգիչ.....5
- Գլուխ 2. Բնությունն ու մարդը Հ. Սահյանի ստեղծագործություններում.....7
- Գլուխ 3. <<Անտառում>> բանաստեղծությանուսուցումը.....8
- Գլուխ 4. <<Մասրենին>> բանաստեղծության ուսուցումը.....11
- Եզրակացություն.....14
- Գրականության ցանկ.....15

Ներածություն

Աչքն ու ականջն եմ մայր բնության,

Գիտակցությունն եմ նրա մարմնավոր...

Մարտիրոս Սարյանն ասել է. «Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ»: Համո Սահյանի պոեզիան դրա վառ արտահայտությունն է: Բանաստեղծը երկար ճանապարհ է անցել՝ իրեն բնության մի մասնիկն զգալու և նրա հետ ու նրա միջոցով հավերժելու համար: Ինչպես ինքը՝ Սահյանն է խոստովանել՝ սկզբում նա բնությունը տեսել-զգացել է իր միջոցով, ապա հասուն տարիներին ձգտել է իրեն հասկանալ բնության միջոցով: Սա մի ամբողջ թռիչք է նրա բանաստեղծական մտածելակերպի մեջ:

Բնության մեջ է մարդը ինքնակատարելագործվում և ինքնաստեղծվում, նրա բնապաշտական տողերում տեսնում ենք աշխարհի, բնության հետ մարդու հարազատությունը, անբաժանելիությունը, կեցության հուզապարար զգացումը, բարության լույսը: Համո Սահյանի պոեզիայում քարերը հայի սիրտ ու հոգի ունեն: Նույնիսկ իր պաշտելի և իմաստուն Խաչի պապի ու ծանրանիստ, մամռակալած ժայռի միջև նմանություն է տեսնում բանաստեղծը: Մեր գրականության մեջ, մասնավորապես պոեզիայում, ըստ իս, ոչ ոք այնպես չի հասկացել հայոց քար ու քարափների, ասել է թե՝ մայր բնության լեզուն, ինչպես Համո Սահյանը:

Մեզնից յուրաքանչյուրն իր Սահյանն ունի: Ամեն մեկը, ով քիչ թե շատ պոեզիա է սիրում ու հասկանում, պոետին յուրովի է բացահայտում: Ես էլ իմ Սահյանն ունեմ՝ մեր պոեզիայում մեծագույն բնանկարիչ Համո Սահյանը: Նրա պոեզիայում ստվերներ չկան, ամբողջովին լույս է: Բնությունն է նրա ամենահարազատ տարերքը, և հատկապես այստեղ է նա հզոր և անմրցակից: Չեմ կարող չասել, որ, այնուամենայնիվ, նրա բանաստեղծական տան համար ամենաշատ օգտագործված շինանյութը արևից խանձված, անձրևից ու հողմերից ծեծվածթրծված քարերն ու քարափներն են, որոնք հղկել, գոհարների փայլ է տվել Համո Սահյանը և կառուցել բանաստեղծական իր սրբազան տաճարը, որի անունն է Հայաստան:

Թեմայի արդիականությունը: Թեման արդիական է այն առումով , որ սովորողին հնարավորություն է ընձեռնում <u>վեր հանելու, ընկալելու, ճանաչելու</u> բնապաշտական պոեզիայի իմաստասիրական շերտերը: **<<** Մարդն իր կորցրած ազնվությունը բնությամբ կարող է գտնել**>>** : Սա է Սահյանի բնապաշտական պոեզիայի առանցքը:

Սահյանական բնությունն է մարդուն մղում դեպի ազնիվը, բարին, գեղեցիկը և մարդկային հոգին գտնում է իր արդիականությունը, ազատությունը: Բնության մեջ է մարդը ինքնակատարելագործվում և ինքնաստեղծվում: Նրա բնապաշտական տողերում տեսնում ենք աշխարհի, բնության հետ մարդու հարազատությունը, բարության լույսը, կեցության հոգեպարար զգացումը:

Սահյանի երգի ժամանակը հավիտենությունն է և այդ ժամանակի անսամանության մեջ մարդը քննության է ենթարկվում՝ զուգահեռվելով բնության հետ:

Նպատակը: Նորովի ուսումնասիրել Սահյանի բնապաշտական պոեզիան՝ իր իմաստասիրական, դաստիարակչական, ճանաչողական շերտերով, որը սովորողի մեջ կարթնացնի ստեղծագործելու մտածողության, մղի ինքնակատարելագործման, ինքնաճանաչման: Սովորողը գնահատի բնության ու մարդու ներդաշնակությունը, բացահայտի ինքն իրեն, ինքնակազմակերպվելու հմտություն ձեռք բերի:

Միջառարկայական կապեր: Սահյանի բնապաշտությունը ուսումնասիրելու ընթացքում կապ ստեղծել կենսաբանության, նկարչության, երաժշտության, տեխնոլոգիա, աշխարհագրություն առարկաների հետ:

Կենսաբանության ուսուցիչը կծանոթացնի, կբացատրի, տեքստերում հանդիպող բույսերի ու կենդանիների մասին: Սովորողները կնկարեն պաստառներ, դեկորներ կստեղծեն: Աշխարհագրության ժամին սովորողներն կծանոթանան հայկական լեռնաշխարհին, բնության երևույթներին:

Աշխատանքի խնդիրը: Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

- <u>ՈՒսումնասիրել</u> Սահյանի բնապաշտական պոեզիան
- <u>Նկարագրել</u> մարդ-բնություն կապի արդիականությունը
- <u>Վեր հանել</u> սովորողի ճանաչողական հետաքրքրությունները
- <u>Խթանել</u> սովորողների ստեղծագործական կարողունակությունը
- <u>Զարգացնել</u> սովորողների ինքնաճանաչողությունը բնության միջոցով

ԳԼՈՒԽ 1

ՍԱՀՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉ

Ինչպես ամեն արվեստագետ, Համո Սահյանը ևս ուներ իր նախասիրած թեմաները, բանաստեղծական իր անկյունը, իր ներշնչարանը: Դա լեռնաշխարհի բնությունն է, հարազատ Որոտանի եզերքը, որն այնքան գույներ ու բույրեր է պարգևել նրա պոեզիային: ″Նա բնության մեջ փնտրում էր մարդուն″ այսպես է ներկայացրել Սահյանին իր ընկեր Շչորս Դավթյանը: Համո Սահյանի պոեզիան մի ուրիշ աշխարհ է: Տարբեր բանաստեղծություններում, ինչպես նաև հոդվածներում ու հարցազրույցներում Սահյանը բազմիցս անդրադարձել է ստեղծագործական հարցերի, փորձել ինքն իրեն ու ընթերցողին հասկանալի դարձնել իր բանաստեղծի էությունը:

Իր ամենավերջին բանաստեղծությունը կոչվում է «Իմ քարափներն ու ես»: Երբ ասում է՝ ինձ բացակա չդնեք, նա քարափներին էր հորդորում, որ ստեղծվի իր անմահությունը:

Ես եմ քարե պատարագ,

Ձեզնից սերված, ընդունեք;

Անվերջ, անշարժ ձեր երթում

Ինձ բացակա չդնեք…

Այն հարցին, թե ինչու **<<**քարափների երգը**>>** սկսվել ու չի ավարտվում, Համո Սահյանը պատասխանել է. **<<** Քարափների երգը բնության մարդկայնացման և մարդու բնականացման խնդիրն է, որն արվեստի մեջ երբեք չի ավարտվելու, իսկ ինձ համար այն ավարտվելու է իմ կյանքի հետ: **//** Համո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, էջ **176//**

Սահյանի գործերում սփռված են բնության տարրերի, մարդկայնացման՝ անձնավորման կամ դիմառնության հարյուրավոր դեպքեր:

Գետը՝ Որոտանը, բանաստեղծի հարազատ եղբայրն է, եղեգը մարդահասակ է:

Ձորը ուզում է կուլ տալ արեգակին, սա խաբում ու հեռանում է, ձորը խռովում է: Քամին համբուրում է տերևին և ծիծաղում անտառի վրա: Մարդիկ զարմանում են իր արտասովոր արհեստի վրա, թե ինչպես է ինքը քարափը դարձնում պոզավոր մի եզ, ամպը՝ հարսնացու աղջիկ, լեռնային գետը նժույգին նստած հեծյալ: Ուրեմն բանաստեղծի արհեստը բնության մարդկայնացումն է, և Սահյանը բացատրում է, որ դրանով ինքը որոնում է իրեն, արհասարակ մարդուն. Այսինքն, մարդու անմահությունը նա տեսնում էր բնության հետ միախառնվելու մեջ:

Բայց ես նրանց մեջ ինձ եմ որոնում

Ձեզ եմ որոնում: Որոնում եմ ես

Ոտքերը հողոտ, ճակատն արևոտ

Իմ սրտի ուզած, մարդամետ մարդուն

Նա բնության մեջ փնտրում էր մարդուն: Մարդու մեջ փնտրում էր բնականը: Եվ ես այդ սահմանումն արել եմ: Կոչվում էր «Անձնավորված, շնչավորված բնություն և բնական մարդ»: Հետագայում իր բանաստեղծություններով ուզում էր գրականագիտությանը հասկացներ, որ ինքը բնության երգիչ չէ, ով էլ ասես՝ բնությունը կնկարագրի, կերգի: Եվ այդ քարը, քարափը բացարձակապես մարդկային զգացմունքներ էր արտահայտում: Դա քարափի նկարագրություն չէ: Ինքը նույնիսկ կարող էր տերևի, խոտի, ծաղկի մեջ իմաստ տեսնել:

Գլուխ 2

Բնությունն ու մարդը Հ Սահյանի ստեղծագործություններում

Բնությունը մեծ դեր ունի **19-20**-րդ դարերի հայ բանաստեղծների ստեղծագործություններում: Նրանց աշխարհում մարդու կյանքը և բնության տարերքը համահունչ են, փոխկապված. դա միասնական ապրող ու շնչող կենսագոյություն է: Բնությունն է տնօրինում մարդկանց ճակատագիրը, մարդը ձուլված է բնությանը, նաև մաքառում է նրա դեմ, նվաճում իր կենսական իրավունքը: Բնությունն ու մարդը ենթարկվում են միևնույն բիրտ օրենքներին:

Մարդը բնության զավակն է. խաթարվում է բնությունը, խաթարվում է և մարդը: Մարդը բնությունից է քաղում իր հոգևոր գեղեցկությունները, ապրումները, հաղորդակցվում բնությանը: Բնաշխարհն է ձևավորում մարդկանց հոգեբանությունը: Գլխավոր նախապայմանը բնության ակունքներին մոտ լինելն է: Հայ հոգևոր մշակույթի շրջանակներում բնության նկատմամբ ձևավորվել է հատուկ բանաստեղծական վերաբերմունք: Սակայն բնության պոեզիայում նկատվում են դառնության շեշտեր. բնությունը եղծվում, աղավաղվում է քաղաքակրթության ավերիչ շնչից, մարդը հեռանում է բնությունից, օտարվում, և դրանով էլ դատարկվում, արժեզրկվում, աղքատանում է մարդկանց էությունը...

Համո Սահյանի ստեղծագործության մեջ իր հաստատուն տեղն է գրավում բնությունը, ինչի համար էլ բանաստեղծին անվանում են «բնության երգիչ»: Բնությունը բազմաթիվ բանաստեղծների ստեղծագործության թեման է: Սահյանը շատ հաճախ է անդրադառնում բնությանը, նա լավ է հասկանում բնության լեզուն, նա սերտ կապված է իր մայր հողին, քարափներին, ձորերին, կիրճերին և գետերին: Սահյանը տուրք է տալիս հավերժ բնությանը:

Համո Սահյանի համար բնությունը մերթ մանկության վերհուշ է, մերթ հասարակական երևույթների մասին խորհելու առիթ, մերթ մարդկային կյանքի, զգացմունքների իմաստավորում, մերթ աշխարհընկալման և ինքնաճանաչման միջոց:

Գլուխ 3

<<ԱՆՏԱՌՈՒՄ>> ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Անտառում ամպի ծվեններ կային,

Կապույտ մշուշներ կային անտառում.

Օրոր էր ասում աշունն անտառին.

Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Բնությունը որպես թեմա, հենց սկզբից հարազատ է եղել Համո Սահյանին: Նրա ստեղծագործություններում բնապատկերը փիլիսոփայական իմաստ և խորհուրդ է ստանում,առնչվում տիեզերքի և մադու ճակատագրի հետ: Սահյանական բնությունը հայոց երկրի Զանգեզուր կամ Սյունիք լեռնաշխարհն է: Բնապատկերի բաղադրիչները անվանական հերոսներ են՝լեռներ, ձորեր, գետեր: Անգամ անշունչ երևույթները անձնավորված ու ապրող են իր բանաստեղծություններում:

<<Անձնավորված, մարդացած բնություն և բնական մարդ. ահա իմ հավատո հանգանակը կյանքում և արվեստում**>>**,- ասել է նա: Սահյանի բնությունը մտածող է, հասկացող, նրա բաղադրիչները ապրում են, ունեն կյանքի պատմություն: **<<**Անտառում**>>** բանաստեղծությունը անտառային ձայներով, բույրերով ու գույներով, գոյության հավասարազոր կերպարներով՝որսկան, փայտահատ, կենդանիներ՝եղնիկն ու իր հորթը, ու բույսեր կաղնի, իրար հետ զրուցող սոճի ու եղևնի: Հետո բնության պատկերը կարծես իր արտացոլանքն է գտնում վայրի նշենու ու արծաթված սունկի տեսքով: Չորրորդ քառատողում հեղինակը բնության մաս է

դարձնում եղնիկին ու իր հորթին: Նրանք կարծես միաձուլված են բնությանը, իսկ որսկանը նրանց կորած հետքերն է որոնում:

Կենդանի հերոս է փայտահատը, ով շարունակում է իր տաք սղոցը յուղել և բնության պատկերի մի մասը կազմել: Անտառի պատկերից զատ, հեղինակը տալիս է նաև անտառապահի տան, վառվող խարույկի և իրար հետ զրույց անող եղևնու և սոճու պատկերը: Վերջին քառատողով հեղինակն ամփոփում է անտառում տիրող խորհուրդը: Մարդու և բնության ներդաշնակության և անխախտելիության օրինաչափությունը:

Անտառում խորին խորհուրդներ կային

Եվ արձագանքներ կային անտառում,

Օրոր էր ասում աշունն անտառին,

Սակայն անտառի քունը չէր տանում:



Սովորողների մոտ ճանաչողությունը ավելի լավ զարգացնելու, բնությունը սիրելու, ստեղծագործելու կարողությունը ձևավորելու համար, ուշ աշնանը կազմակերպել արշավ-էքսկուրսիա մոտակա անտառ: Սովորողներին ուղղորդել, որ յուրաքանչյուրն ինքնուրույն ուսումնասիրի և իրեն **<<**գտնի**>>** բնության մեջ, նմանեցնի անտառին:Ըստ նախասիրությունների՝ սովորողներին առաջարկել ստեղծել բնապատկերներ, գրել բանաստեղծություն, շարադրություն:

Գլուխ 4

<<ՄԱՍՐԵՆԻՆ>> ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Պտուղդ քաղող չկա,

Մասրենի, սարի մասրենի,

Պատիվդ պահող չկա,

Մասրենի, բարի մասրենի:

Ասում են՝ էլ մարդ չկա,

Որ փնտրի քնքշանքդ փշոտ,

Քեզ գրկի ու տաքանա,

Մասրենի, ժայռի մասրենի:

<<Մասրենի**>>** բանաստեղծությունը զետեղված է **<<**Այստեղ սարեր կան սարերի վրա**>>** շարքում: Նվիրել է հայ բնաշխարհի մեծ նկարիչ Սարյանին: Այստեղ մասրենու թուփ Սարյանը դառնում է Հայաստանի խորհրդանշան, որը, դիմագրավելով ամեն տեսակի դժվարություններին, ապրում է հարատև կյանքով: Մասրենին ինքը Հայաստանն է: Այս բանաստեղծության մեջ հայ ժողովրդի պատմական հոգեբանության պատկերն է: Մասրենու թփի մասին Սահյանը գրել է. **<<**Մասրենին ինձ համար ճգնավորության, շռայլության, համեստության և դիմացկունության խորհրդանիշ է**>>**, **<<**Մարդը շատ բան ունի սովորելու ծառից: Մասրենին որտեղ էլ բուսած լինի մնում է մասրենի: Գոյության համար մասրենու արմատն ու փուշը հավասար կռիվ են տալիս**>>**: Ի վերջո բանաստեղծը ամփոփում է. **<<**Մասրենին ես եմ**>>**: Իսկ այդ ես-ը հենց հայ շողովուրդն է: **<<**Մասրենին չգիտեր, որ ինքը հայ է, հայի բնավորություն ունի: Իրար նման են Հայաստանն ու մասրենին, բանաստեղծն ու մասրենին**>>**: Հայաստանը՝ որպես ժողովրդի պատմություն, բանաստեղծը՝ որպես հայ մարդու ճակատագիր:

ՄԱՍՐԵՆԻՆ ԻՄ ԵՐԿՐԻ ԿԵՐՊԱՐՆ Է

Երաշտ տարին էլ լավ պտուղ է տալիս, մի քանի անգամ ծաղկում՝ կանաչում է, սպիտակում, դեղնում, կարմրում…: Խեղճ, բաշխող, բայց և փշեր ունի:

Օտարն ինձ պիտի ճանաչի մասրենու թփով՝ ժայռի մեջ խրված: Ամենալավ բույրն ունի, գույնն ունի, պտուղն ունի: Արմատը խոր, պիրկ, ամուր, հապա փորձիր պոկել…

Մասրենին ինքը չգիտե, որ այդքան բուժիչ է, այդքան գեղեցիկ, այդքան պիտանի: Մասրենին չգիտե և չէր էլ կարող իմանալ, որ ինքը հայ է, հայի բնավորություն, որ այնքան բնորոշ է մեր ազգին:

Դա մենք պիտի իմանանք և ներկայացնենք այլոց էլ:

Մասրենին Թումանյանի ժայռի արժեքն ունի…

Մասրենու էությամբ պիտի նաև ինքներս մեզ ճանաչենք:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Կազմակերպել դաս-զրույց **<<** Մասրենին ես եմ**>>** թեմայով: Սովորողները արտահայտում են հետաքրքիր մտքեր, համեմատական բնութագրեր են կազմում, զուգահեռներ տանում հայի ու մասրենու միջև: Յուրաքանչյուրը մասրենու բնորոշումներից նշում է այն հատկանիշը, որը ունի և որը կուզենար ունենալ:

Համո Սահյանը իր պոեզիայում բնությունը նկարագրում է միևնույն ժամանակ լուռ, ու աղմկոտ, ոչինչ չասող ու ամեն ինչ ասող, անկոտրում ու սրտաբաց, արթուն բայց քնած: Սահյանի պոեզիան առանձնանում է նրանով, որ կարծես նա զգա բնությունը, մարդկանց հոգեվիճակը, հոգին: Եթե Սահյանը ապրեր ներկա ժամանակում, կարծում եմ միգուցե և շատ ազդեցիկ մտքերով ազդեր ներկա ժամանակաշրջանի մարդկության վրա: Սահյանի բանաստեղծություններում բնություն-մարդ կապը համակապակցված են, նա չի առանձնացնում մարդունբնությունից, չէ որ մարդը բնության մի մասնիկն է:

<<Ես կարծես աշխարհայացքով ինձ մի փոքր նման հոգի գտա>>



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով այս հետազոտական աշխատանքը՝ եկա այն եզրակացության, որ Սահյանի բնապաշտական ստեղծագործությունները նորովի մատուցմամբ սովորողի մոտ ձևավորում և զարգացնում են ստեղծագործելու կարողունակությունը, ինքնաճանաչումը, կայունանալու հաստատակամությունը: Բնություն-մարդ կապն այն մեծ ուժն է, որը կարող է սովորողի մտահորիզոնն ընդլայնել, զարգացնել ճանաչողությունը: Սիրելով բնությունը՝ սովորողների մոտ զարգանում է մարդասիրությունը: Եթե ներդաշնակ ես բնության հետ, սիրում ես բնությունը, մարդուն նույնացնում ես բնությանը, համարում եմ նրա մի մասնիկը, ուրեմն սիրում ես մարդուն և կարողանում ես հանդուրժել: Սահյանի բնապաշտական պոեզիան սովորեցրեց պայքարել, մասրենու պես կպած մնալ քարեղեն, ժայռեղեն երկնքին ու երկրին: Սահյանով սովորողը ճանաչեց հային, Հայաստանը, բացահայտեց ու ընկալեց արժանապատվության գաղափարը: Սովորողները ընկալեցին, որ բնությունը ներշնչանք է, բնությունը ճանաչողություն է, բնությունը ուսուցանող, կերտող, կոփող, բնավորություն ու արժեհամակարգ ձևավորող ուժ է: Բնությունը մարդն է, բնությունը ես եմ: Սովորողները բնության մեջ տեսան, ճանաչեցին, գնահատեցին և սիրեցին մարդուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Լևոն Մկրտչյան, Զրույցներ բանաստեղծի հետ // նվիրված է բանաստեղծ Համո Սահյանին// << Սովոտական գրող>>, Երևան 1988

  Սովետահայ գրականության պատմություն, երկրորդ հատոր //1941-1964//

- Ս. Աղաբաբյան, Արդի հայ գրականության պատմություն, հ.2, Ե., 1993, էջ 336-361

- Հ. Հովնաթան, Խոսում է Համո Սահյանը, Երևան 1992

- Համո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, Ե., 2003 (Սահյանի հոդվածներն ու հարցազրույցները)

- https://banduryanasya.wordpress.com/2020/04/02/%D5%A2%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB%D5%BA%D5%B8%D5%A5%D5%A6%D5%AB%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4/?fbclid=IwAR0i6tm9kMNnSN2kKLP1Z23zOhmrt7E_UnxT8ACeGNWwRI34_nUOgLE8L4U

- http://www.hayzinvor.am/26389.html?fbclid=IwAR1JI1EuGWr0w1zNypGykd1HLr9eQSrky1dp5g7ZtKykmGYCwP1DceEk98k

- https://milenadanielyan.wordpress.com/2020/04/02/%d5%a2%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8%d5%bd%d5%a1%d5%b0%d5%b5%d5%a1%d5%b6%d5%ab%d5%ba%d5%b8%d5%a5%d5%a6%d5%ab%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4/?fbclid=IwAR2PhalIG8p2Czbpml978cigUGFJbm4eUf0ks7pax48AoDWtGV0PEHX9Ca4

- http://asekose.am/am/post/na-bnoutyan-mej-pntroum-ermardounhamosahyani-enkere-nra-masin?fbclid=IwAR0XHo99u75qttotxDTZHt4bqE8IlbPe62hPVFpjCWaYgBkhxLDo--MrI4

- https://annaisaxanyan.wordpress.com/2021/04/13/%d5%bd%d5%a1%d5%b0%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a8%d5%b8%d6%80%d5%ba%d5%a5%d5%bd-%d5%a2%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6%d5%a5%d6%80%d5%a3%d5%ab%d5%b9/?fbclid=IwAR3DBJ7f1pvqO26DKXU2rB9_6Axyd_TY8dzpAx2JOwwQCt1_6CdIPFMooU